ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ադրբեջանի ներկայացուցիչը մատնացույց է անում Մոսկվային

Վերջերս Ադրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավարներից Էֆիբար Մամեդովը եղել է Վաշինգտոնում, որտեղ Kennan Institute for Russian Studies-ում տված մի դասախոսության ընթացքում հայտարարել է, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ընդհարումները քաջալերվում են Մոսկվայի կողմից, պատժելու համար դեմոկրատական շարժումները եւ պարտադրելու, որ հանրապետությունները մնան Խ. Միության կազմում: «Վստահ եմ, ասել է նա, որ Հայաստանում սեպտեմբերին կայանալիք հանրաքվեից առաջ նոր լարվածություն է ստեղծվելու: Կենտրոնը պիտի փորձի համոզել, որ ոչ Ադրբեջանը եւ ոչ էլ Հայաստանը չեն կարող առանց իրեն վերապրել»:

Քսան րոպե տեւած իր ելույթի ընթացքում Մամեդովը պատասխանել է ներկաների հարցերին: «Լարվածությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ստեղծվել է ժողովրդին մոռացնել տալու համար գոյություն ունեցող հարցերը: Քարոզչական ամբողջ մեքենան ուղղված է հակամարտ զգացումներ առաջացնելուն: Սա կոմունիստական կուսակցության քաղաքականությունն է, որը թիկունք է կանգնում իշխանիներին, ինչը կարող է առաջնորդել իշխանական ամբողջատիրությանը: Ադրբեջանում զինվորական ու քաղաքական իրավակարգը ամեն ինչ անում է ընդդիմանալու համար դեմոկրատական ուժերին: Կարող ենք հայտարարել, թե խորհրդարան չկա Ադրբեջանում: Թեեւ, այսպես ասած, ընտրություններ կատարվեցին, սակայն արդյունքները խեղաթյուրված էին»:

Խոսելով Լեռնային Ղարաբաղի մասին, Մամեդովը պատասխանեց.

«Ժողովրդական ճակատն ունի իր ծրագիրը Լեռնային Ղարաբաղի հարցի նկատմամբ: Այդ հարցը կարող է լուծվել միայն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ: Այնքան ժամանակ, քանի դեռ Ադրբեջանն ու Հայաստանը մաս են կազմում Միության, այդ հարցը չի կարող լուծում գտնել: Կենտրոնն ընդունում է, որ լարվածությունն ստեղծվում է Խ. Միության պայմանագիրը պարտադրելու նպատակով: Լեռնային Ղարաբաղի հարցը կարող է լուծվել միայն բանակցությունների ուղիով: Մինչեւ այն ժամանակ, քանի դեռ Հայաստանն ու Ադրբեջանը չդառնան ինքնիշխան պետություններ, այդ բանակցություններն անհնար են»:

Պատասխանելով շրջափակումի մասին տրված մի հարցի, Մամեդովն ասել է. «Նայեցեք քարտեզին, 47 կմ երկարությամբ ճանապարհը անցնում է Հայաստանից ու Նախիջեւանից: Այսպես կոչված շրջափակումը նախաձեռնվեց հայերի կողմից: Մեր գնացքները ենթարկվում էին գնդակոծության: Իրողությունն այն է, որ բանակը, որին վստահվել էր այդ շրջանի ապահովությունը, ստիպված էր այդ ստանձնել, որի հետեւանքով գնացքները վարող մեքենավարները հրաժարվեցին աշխատել: Հետեւաբար, շրջափակումը պատահեց ե՛ւ Հայաստանին, ե՛ւ Նախիջեւանին: Հայերն այն վերածեցին քարոզչության, թե երկրաշարժից պատուհասված իրենց երկիրը ենթակա է շրջափակման»:

Ինչ վերաբերում է գազատարի փակումին, Մամեդովը դրա պատճառը նկատեց «հայ գրոհայինների» հարձակումը Ղազախի շրջանի ազերի գյուղերի վրա: «Որեւէ ինքնիշխան պետություն իրավունք ունի պատասխանելու տեսանելի պատժամիջոցներով՝ այդպիսի գործողությունների դեմ»,- եզրափակել է նա:

«Գայլաթ»

Ծաղրանկարը՝ Winnipeg Free Press